ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՊԱՏՄԱԲԱՆԸ

(Երվանդ Ղազարի Սարգսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Իր ծննդյան 80-ամյակը բոլորեց նշանավոր պատմաբան-արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե. Ղ. Սարգսյանը։

Ե. Ղ. Սարգսյանը ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 13-ին, Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում։ Միջնակարգ կրթություն ստանալուց հետո սովորել է Լենինգրադի համալսարանի պատմության ֆակուլտետում, արևելագետ-պատմաբանի թևքումով։ 1942 թ. ավարտել է տեղի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան՝ ամբողջ քաղաքի բնակչության հետ միասին արիությամբ հաղթահարելով պատերազմի և շրջափակման հետ կապված հայտնի դժվարություններն ու զրկանքները։ Նշված ինստիտուտը Լենինգրադից էվակուացնելուց հետո Ե. Սարգսյանը տեղափոխվել է Հայաստան և աշխատել Հայաստանի ԳԱ տնտեսագիտության բաժնում, որպես ավագ գիտաշխատող։ 1944—1946 թթ. Ե. Սարգսյանը աշխատել է Հայաստանի արտաքին գործերի նախարարության քաղաքական բաժնում, որից հետո վերջնական աշխատանքի անցել Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտում՝ գրաղեցնելով ավագ գիտաշխատողի տեղ (1946—1950)։ 1950—1952 թթ. նա ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղարն էր։ 1952—1958 թթ. դարձյալ դրաղեցրել է ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատողի, իսկ 1958—1971 թթ.՝ ԳԱ արևելագիտության սեկտորի Թուրքագիտության խմբի վարիչի տեղը։ Նշված սեկտորի հենքի վրա ձևավորված արևելագիտության ինստիտուտի հիմնադիրներից մեկը Ե. Սարգսյանն է։ 1986 թ. դեկտեմբերի 30-ից ցորս նա կատարում է նույն ինստիտուտի գլխավոր գիտաշխատողի պարտականությունը։

Շուրջ հինդ և կես տասնամյակ է, ինչ Ե. Սարգսյանը գործում է հայրենի գիտության և մանկավարժության բնագավառներում։ Գիտության մեջ նրա ծանրակշիռ խոսքն արտահայտվել է շուրջ 150 գիտական աշխատություններով, այդ թվում մեկ և կես տասնյակի չափ մենագրություններով, որոնք արժեքավոր ներդրում են հայ արևելագիտության և պատմագիտության մեջ։ Ե. Սարգսյանն ունի գիտական հետաքրքրությունների լայն շրջանակները, որոնք ընդգրկում են այնպիսի կարևոր հիմնահարցեր, ինչպիսիք են Օսմանյան կայսրության անկման շրջանի պատմության խնդիրները, Թուրքիայի տնտեսական ու քաղաքական հարաբերությունների պատմությունը նրա նոր շրջանում, Արևմտահայաստանի ու արևմտահայ բնակչության սոցիալական, տնտեսական ու քաղաքական կացությունը, թուրքական պետության քաղաքականությունը արևմտահայության հանդեպ, արևմտահայության ցեղասպանության, ինչպես նաև հայ-թուրքական ու խորհրդա-թուրքական հարաբերությունների բաղմաբնույթ և ուշագրավ շրջանում տվյալ ժամանակաշրջանի գիտական լուսաբանման համար կարևոր գիտական կարևորություն ներկայացնող այլ խնդիրներ։

Գիտնականն իր հետազոտական աշխատանքի ուղին սկսել է հիրավի նոր և ինքնուրույն մտակառույցների ստեղծմամբ, քաղաքականության և դաղափարախոսության սխեմատիկ ու տիրական դրույթների հետ նկատելի բանավեճով, որով էլ, ի դեպ, պայմանավորված է նրա հետազոտությունների ոչ միայն հրատապ բնույթը, այլև գիտական երկարատև ու արդասավոր ուղին։ Նշված տեսակետից արդեն իսկ հատկանշական է նրա գիտական առաջին լուրջ մենագրությունը՝ «Օսմանյան կայսրության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում (19-րդ դ. II կես)» (Երևան, 1957) վերնագրով։ Աշխատության մեջ հեղինակը բացահայտում է նվաճված ժողովուրդների նկատմամբ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության և ստեղծված տնտեսական հիմքերի ու հարաբերությունների ներքին կապերի և փոխպայմանավորվածության մի շարք էական կողմեր՝ հետազոտության առանցք դարձնելով Արևմտյան Հայաստանը։ Նշված աշխատությունը նրա թեկնածուական թեզի նյութն էր, որին հետևելու էր նրա մյուս աշխատությունը՝ «Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին» վերնագրով

(ռուսերեն, 1962)։ Այս մենագրությունը վկայում է Թուրքիայի ու Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի քաղաքական իրականության բազմաշերտ խորքերը թափանցելու և դրանք նորովի ու համոզիչ վերարտադրելու՝ գիտնականի անուրանալի շնորհների մասին։

Վերոհիշյալ՝ ամբողջական աշխատությունը Ե. Սարգսյանը ներկայացրեց և պաշտպանեց որպես դոկտորական թեզ՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտում (Մոսկվա, 1963)։ Աշխատությունը լայն արձագանք գտավ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանի գիտական շրջաններում՝ արժանանալով բարձր գնահատականի, նաև՝ կողմնակալ քննադատության ու կարծիքների, այս երկու դեպքում էլ վկայելով իր գիտական հրատապության ու ուշագրավ որակների մասին։ Աշխատության մեջ հիմնավորվում է Օսմանյան քայքայվող կայսրության հենքի վրա բարձրացող քաղաքականության և գաղափարախոսության հետզհետե սերտաճումը, որը, ի վերջո, պետք է հասցներ օսմանիզմից մինչև պանթուրքիզմի ու երիտթուրքական ծավալապաշտ քաղաքականության, և որի իրագործման ճանապարհին թուրքական կառավարողները կանգ չառան նույնիսկ արևմտահայությանը ֆիզիկապես ոչընչացնելու ծրագիրը կատարելու առջև։ Նշված քաղաքականությամբ էլ դիտակետը հիմնավորում է Թուրքիայի մասնակցությունն առաջին աշխարհամարտին, որը երիտթուրքերը դիտում էին որպես ամենաարդյունավետ ուղի՝ իրականացնելու իրենց զավթողական ծրագրերն Անդրկովկասում, Կենտրոնական Ասիայում և այլուր։ Հայերի ցեղասպանությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ այդ ծրագրերն իրականացնելու գործերից մեկը ներքին քաղաքական կյանքում, մի դրույթ, որ Ե. Սարգսյանը հմտորեն է դարձնում պատմականորեն անհերքելի իրողությունների ընդհանրացմամբ, ազգայնորեն հարուստ հենքի վրա։ Այս դրքի մեջ ղեկավարի ամբողջովին նվիրված էր արևմտահայության ցեղասպանությանը, և այդ թեմային վերաբերող առաջին հետազոտությունը լինելով, լույս տեսավ Մեծ եղեռնի հիսնամյակի առթիվ (Բեյրութ, 1965)։ Ե. Սարգսյանի մյուս հետազոտություններն առհասարակ, որոնք վերաբերում են առաջին աշխարհամարտից հետո և 1920-ական թվականների սկզբներին Թուրքիայի ներքին ու միջազգային կացությանն առնչվող պատմական երևույթներին, քեմալական շարժմանն ու Խորհրդային Ռուսաստանի քաղաքական հարաբերություններին, որոնք, այլ հիմնահարցերի համադրմամբ, նա մշտապես կապակցում է հայ ժողովրդի ազգային ու քաղաքական կացությանը։ Այդ հետազոտություններով փաստորեն հիմք էր դրվում քեմալական շարժման նոր գնահատականին, նրա զավթողական, պանթուրքական էության գիտական բացահայտմանը։ Այսպիսի մոտեցումը ուղղակի հակադրություն էր կազմում 1920-ական թվականներից սկսած ուղղափառ բոլշևիկյան և թուրքամետ պատմագիտության դրույթներին, որոնց ուժով Քեմալը և քեմալական շարժումը ներկայացվում էին որպես սոցիալիստական շարժման դրսևորում՝ Մերձավոր արևելքում։ Այս կապակցությամբ Ե. Սարգսյանը մշտապես բանավեճ է մղել խորհրդային պատմագիտության որոշ թուրքամետ ներկայացուցիչների դեմ, մասնավորապես ի դեմս պրոֆ. Ա. Ֆ. Միլլերի։

Ե. Սարգսյանի գիտական գործունեությունը ներծծված է սկզբունքայնությամբ, պատմագիտության մեջ արդիական հիմնահարցերի, ժամանակի հրատապ գիտական խնդիրների ճշգրտացի լուսաբանման մշտական ձգտումով։ Այս իմաստով հնարավոր չէ շրջանցել Ռ. Սահակյանի հեղինակակցությամբ նրա հրատարակած «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ենթագիտությունը Թուրք պատմագրության մեջ» աշխատությունը» (1963), որի անգլերեն հրատարակությունն իրականացվեց ԱՄՆ-ում (1965)։ Առաջին անգամ ամբողջական ուսումնասիրության նյութ էր դառնում թուրքական պատմագիտությունն՝ սկսած ասպարեզում տասնամյակներ ի վեր մշակած միտումնավոր և քաղաքականության պաշտոնական ավազանից սնվող մտակառույցը ստեմատությունի նկատմամբ թուրքական պետականության կիրառած ցեղասպանության սրողումը և արդարացումը։ Այս աշխատությունն ուշագրավ է նաև նրանով, որ դրանով հայ պատմագիտությունն առաջ էր ընկնում դանգվածային լրատվության միջոցներից և մերկացնում թուրքական ժամանակից լրատվական ապակողմնորոշումը՝ ձեռք բերելով տրամաբանական նշանակություն։ Ցավոք, այս ուղղությունը մնաց գրեթե արտաքո կարգի երևույթ, որով, թերևս, կարելի է նաև բացատրել այն, որ այսօր մեր դանգվածային լրատվության միջոցները առանձնապես հրապարտանալու բան չունեն միջազգային հանրության աչքին թուրքական կեղծ ու ապակողմնորոշող լրատվությունը մերկացնելու ասպարեզում։

Վաղուց ի վեր հայ պատմագիտության շրջանակներից դուրս հայտնի գիտնականը իր աշխատակցությունն է բերել նաև ոչ հայկական մասնագիտական հրատարակություններին։ Նա

հեղինակակցել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի հրատարակած «Թուրքիայի նորագույն պատմությունը» (ռուսերեն, 1968) ուսումնասիրությանը։ Նրա այլ աշխատություններ, հոդվածներ, գրախոսականներ ու հրապարակումներ տպագրվել են Մոսկվայում, նախկին Միության այլ կենտրոններում ու արտասահմանում, որոնք վկայում են անխոնջ հետազոտողի լայն ճանաչման մասին։ Պետք է հիշատակել նաև նրա մասնակցությունը գիտական այլ խոշոր, կոլեկտիվ բնույթի աշխատություններին։ Նրա հեղինակությամբ է գրքվել հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի 6-րդ հատորի «Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» հատվածը, փաստական հարուստ տվյալներով ու վավերագրերով հագեցած մի ուսումնասիրություն՝ նշված ժամանակաշրջանում հայության մաքառումների, պատերազմին նրա մասնակցության, երիտթուրքական կառավարության՝ արևմտահայության նկատմամբ կիրառած վայրագ քաղաքականության մասին։ Ե. Սարգսյանի համահեղինակությամբ է գրվել նաև հայ ժողովրդի պատմության ռուսերեն բազմահատորյակի 3-րդ հատորը՝ «Արևմտյան Հայաստանը 1918—1921 թթ.» հատվածը (դեռևս չի հրատարակվել)։ Նույն թեման են լրացնում նրա գիտական հոդվածները հայկական հանրագիտարաններում, մասնավորապես «Հայկական հարց» (ռուսերեն, 1992) վերտառությամբ հանրագիտարանում։

Արևմտահայության ցեղասպանության թեման համակողմանի լուսաբանում գտավ Ե. Սարգսյանի «Օսմանյան կայսրության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունները 19-րդ դ. վերջին քառորդին և 20-րդ դ. սկզբին» աշխատության մեջ (1972)։ Այստեղ ըստ ամենայնի բացահայտվում են երիտթուրքերի հրեշավոր քաղաքականության անմիջական ակունքները ցեղասպանության գործում, վերջիններիս շարունակությունը գործողության մեջ, որ հնարավոր դարձավ իրագործել խոշոր տերությունների միջպետական հարաբերությունների սուր հակամարտության պայմաններում և նրանց հանցավոր թողտվությամբ։ Այս հիմնահարցին օրգանապես շարահարվող՝ քեմալական շարժման քաղաքական բովանդակության, Օսմանյան կայսրության ժողովուրդների հանդեպ նրա վերաբերմունքի բնութագրման մեջ Ե. Սարգսյանը հակադրվել է այդ շարժման վերաբերյալ դասակարգային, կեղծ մոտեցումներին (անաչառությունը, թեև, պահանջում է ասել, ոչ միշտ և ամենուրեք՝ հասկանալի հրամայականի թելադրանքով) ցույց տալով այդ շարժման հետադիմական, ծայրահեղորեն ագրեսիվ նկարագիրը։ Այս առթիվ պետք է ասել, որ նրա աշխատություններում ղդալի որակ են կազմում գաղափարական և մեթոդական ուղեցույցների փոխարեն անաչառ ու իրատես հետազոտության արդյունքները։ Նույն սկզբունքայնությամբ ու գիտական բարձր որակներով աչքի են ընկնում նրա խմբագրած թուրքագիտական ժողովածուները (3 հատոր), որոնք լույս են տեսել Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ։ Տասնամյակներ շարունակ Ե. Սարգսյանը անդամակցել է դիտական խորհուրդներին, գործուն մասնակցություն բերել հանրապետության ե զուտ տեղական գիտության շրջանակներից դուրս ծավալվող գիտական գործընթացին։ Ուշագրավ զեկուցումներով ու թեզերով նա քանիցս հանդես է եկել հայրենական, ինչպես և բազմաթիվ միջազգային գիտաժողովներում։ Գիտնականի նկարագիրն ամբողջացնում է նրա լուրջ ներդրումը հայ ժողովրդի նոր շրջանի պատմության և արևելագետ մասնագետների նոր սերնդի պատրաստման ասպարեզում։ Նա դասախոսել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում, ընդդիմախոսել շուրջ 40-ի չափ թեկնածուական և դոկտորական թեզերի։

Այսօր էլ հետազոտողի երկրորդ կնդարյա շրջանը ոտք դրած գիտնականը շարունակում է իր գործը, անաղմուկ, բայց բովանդակավորված որոնումներով ու մտահղացումներով։ Գիտական հասարակայնությունը ակնկալում է դրանց իրականացումը՝ մաղթելով նրան քաջառողջություն և կորով։

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Խմբագրության կողմից

Հանդեսի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է ականավոր գիտնականին՝ իր ծննդյան 80-ամյակի առթիվ, ցանկանում քաջառողջություն և արևշատություն։ Խմբագրությունը լիահույս է, որ հետագայում ևս Ե. Ղ. Սարգսյանը կշարունակի իր արդյունավետ գիտական ներկայությունը «Լրաբեր հասարակական գիտություններին» եռամսյայի էջերում։